

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՍՈՒՐԻ ԾՆԵՂԵԱՆ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
6 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1991 Թ.

« Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր
խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն »

Սիրեցեալ հաւատացեալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Ահաւասիկ վերստին կամգձած ենք մեծ խորհուրդի առաջ որ աւետումն է Աստուածորդու հրաշալի ծննդեան: Ամցել են այդ երանելի օրից դարեր ու դարեր, եկել են ու գնացել բազում սերունդներ, բազում իրադարձութիւններ ամբիւ, ամհամար ու զարմանազամ, բարձրացել են ու տապալուել են քանի քանի կուռքեր, աշխարհակալներ, քանի քանի գաղափարախօսութիւններ, սակայն բոլորից վեր, բոլորից ամերեր, բոլորից անկորմչելի մնացել է խօսքը Աստուծոյ, որ աշխարհ եկաւ ծնունդովը մրա Միածին Որդու, Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի:

Երկրորդ դարու վերջերիւ, Աղեքսանդրիայում երկու բարեկամներ, մէկը քրիստոնէայ միւսը հեթանոս, վիճում են իրար հետ: Քրիստոնէան պատասխանելով Դէոկմետին, թէ իմչո՞ւ Յիսուս այնքան ուշացումով աշխարհ եկաւ, քրիստոնէան պատասխանում է իր մամակով՝ « Յիսուս աշխարհ եկաւ, երբ մարդկանց ամիրաւութիւնը իր լրումին հասաւ եւ բացայայտուեց որ մարդկային ամիրաւութեան պտուղը դատապարտում է եւ մահը :» Ուրիշ խօսքով Աստուած իր Որդին աշխարհ առաքեց երբ մարդկութիւնը հասաւ իր ամիրաւութեան եւ իր դատապարտման գիտակցութեան:

Ի տես մեր օրերի աշխարհի բարոյական ու ընկերային անկումային երեւոյթների, ի տես աղաղակող ամիրաւութիւնների ու տառապանքների, ի տես ազգամիջեան թշմամութիւնների ու արիւմահեղ առնակատումների, յիշում ենք Աղեքսանդրիացի քրիստոնէայի մարգարեական խօսքերը, որոնք մահւ մեր օրերին հմչում են այժմեական:

Ո՞ւր է գնում մարդկութիւնը, ո՞ւր են գնում մեծամեծները, ժողովուրդների մականագիրքը տմօրինող գօրեղները:

Արդեօ՞ք, մահւ այժմ, ժամանակը չէ հասած որ մարդկութիւնը գիտակցի իր անկարողութիւնը՝ ինքն իրեն ղեկավարելու, ինքն իրեն փրկելու:

Արդեօ՞ք ժամանակը չէ՞ հասած որ մարդկութիւնը իր հոգու աչքով տեսնի աստղը փրկութեան որ շողաց Բեթղէհեմի երկմքի բարձունքից երկու հազար տարիներ առաջ, տեսնի ծնունդ Յիսուս մամուկին, որ գալիս էր « հօրմերին իրեմց աթոռներից տապալելու եւ բարձրացնելու խոմարհներին »:

Այո այս է երազը մահւ մեր օրերի մարդկանց, մեր օրերի խոմարհ ազգութիւնների լայն զանգուածների:

Սուրբ ծննդեան մեծ խորհուրդի առաջ կանգնած, մեր խոհերը մեզ մղում են մեր հայեացքը ուղղել մասն դէպի մեր բարեպաշտ ժողովուրդը, դէպի մեր տաղանալի այս օրերը, ու լսել մեր արդարութեան աղաղակը, փրկութեան մի արահետ որոնելու իր պայքարի ճանապարհին, մաղթելով որ մա յառաջ ընթանայ առանց յուսալքունելու, առանց վիստելու, առանց իր մերքին հաւասարակշռութիւնը կորցնելու եւ մամաւանդ առանց թուլացնելու իր ազգային միասնութիւնը, զի ամիսբամութիւնը չարեաց մայրն է, իսկ միսբամութիւնը՝ մայրը բարեաց:

Զմռռման Յիսուսի մեծ առաքելի՝ Սուրբ Պողոսի յորդորը որ մարդկային ընկերութիւնը միանեցնում է ամհատ մարդու մարմնին եւ ասում՝ « Աստուած այնպէս կազմեց մարդու մարմինը որ մեր մէջ չլինեմ բաժանումներ, այլ մեր ամղամները մոյլը հոգան միմեանց մկատմամբ: Եւ եթէ որեւէ անդամ ցաւ է զգում մեր հետ ցաւ են զգում բոլոր ամղամները եւ եթէ մի ամղամը փառաւորում է, մեր հետ ուրախանում են բոլոր ամղամները » Ա. Կորնթ. ԺԲ. 25-26/:

Ահա իմաստուն խօսքեր, յաւէտ ճշմարիտ խօսքեր, փրկարար բոլոր ազգերի համար, մամաւանդ երբ մրամք գտնում են ծամր փորձութեանց առաջ:

Աստուծոյ Որդին է, որ իր հրաշալի ծննդեան մեծ խորհուրդով, հրաւեր է կարդում մեզ բոլորիս, համայն մեր քրիստոնեայ ժողովուրդին՝ ամերեր մնալ մեր մախնեաց սուրբ հաւատքի վէմին վրայ, հաւատարիմ մեր ազգի առաքելական Մայր Եկեղեցուն ու ամմացորդ կերպով, բանիւ եւ գործով ծառայել մեր մորահոչակ իմքմիշխան հայրեմի պետութեան, որպէսզի մա քայլ առ քայլ յաղթահարի իր առաջ ծառացած դժուարութիւնները, պահի պահպանի ու ամրապնդի իր ձեռք բերած ազատութիւնները եւ բուժի իր վերքերը մեծ երկրաշարժից աղետեալ տարածքի վրայ: Բարի կամքով, հուժկու բազուկներով եւ միասնական ամղուլ աշխատանքով, բոլոր հայերը թող վերաշինեն ու ծաղկացնեն իրենց հայրեմի Տունը, յաւերժական մեր Մայր Հայաստանը, արարտացած կամքով արմեմական:

Սուրբ Էջմիածնի գահակալները, մասն ամցեալում դժուար ժամանակներին, համազգային միասնութեան ու համերաշխութեան ու եղբայրական գործակցութեան կոչեր են ուղղել մեր ազգի զաւակներին: Նման մի հոգեցումը կոչ է՝ Երամաշնորհ Խրիմեան Հայրիկի պատգամը, 1907 թուին 20 Սեպտեմբերին, որով դիմում է մա իր զաւակներին ասելով՝ «Արդ՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով՝ վշտալից Հայրապետս տարաբախտ Ազգիս՝ որ հասեալ եմ ի մուտս արեւու կենաց իմոց, յորդոր կարդամ առ Սիրելիադ Մեր ամենեսեան, զի իսպառ թօթափեսջիք զատելութիւն եւ զմեծամտութիւն ի սրտից ձերոց, եւ եղիջիք ընդ միշտ մի սիրտ եւ մի հոգի՝ համերաշխ եւ եղբայրական սուրբ սիրով, եւ գործեցէք այնպիսի խոհական իմաստութեամբ, զի արգասիք գործումէութեանց Ձերոց ըստ ամենայնի ոչ լիմիցիմ երբեք ի վնաս թշուառ Ազգին Մերոյ այլ յօգուտ եւ ի զարգացումն մորին: »

Նոր Տարւոյ լուսաբացին, այս խոհերով ու պատգամներով աւետում ենք Սուրբ ծնունդը Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի եւ աղօթում ենք որ Աստուածորդու շնորհները լուսաւորեն ամփոփանքութեան ու բարօրութեան երազանքը մեր յուսացեալ ժողովրդի:

Քրիստոսով թող բացուեն դռները Նոր Տարւոյ: Քրիստոսով ու հայրեմիքի սիրով միացած զաւակները մեր ազգի, թող կերտեն ազատ ճանապարհը իրենց մոր կեանքի:

Ձեզ եւ մեզ մեծ աւետիս, Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Ամէն:

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց